

ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ
6 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա ԹԵՍՏ 3

Շրջան, քաղաք _____

Ուս. հաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 22 առաջադրանք:

1, 2-րդ առաջադրանքները լրացնել:

3-6-րդ, 8-15-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ:

Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, շրջանակի վրա դնում եք X նշանը և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում:

16 -21-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

22 -րդ առաջադրանքում անհրաժեշտ է խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո հատկացված տեղում: Միայն վերջնական պատասխանի գրառման դեպքում միավոր չի տրվում:

1-22 -րդ յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստի առավելագույն միավորը՝ 22:

Թեստ - գրքույկի էջերի ազատ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Աշխատանքի կատարման համար տրվում է 60 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

Թեստ 3
1-2-րդ առաջադրանքները լրացնել

1. Զրոյից փոքր թվերը կոչվում են _____:
2. Համեմատության եզրային անդամների արտադրյալը հավասար է նրա _____ արտադրյալին:

3-6-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

3. Պատահական իրադարձություն է՝
- 1) Գցել են գառը, ընկել է 3 թիվը:
 - 2) Փողոցում հանդիպել եք Տիգրան 2-րդ արքային:
 - 3) 2301 թիվը բաժանվում է 3 –ի:
 - 4) Թթենին աճում է Արցախում:
4. Հանդիսանում է արդյո՞ք $52:39 = 60:45$ հավասարությունը համեմատություն.
- 1) այո
 - 2) ոչ
5. $x = \frac{4}{5}$ և $y = 4$ մեծությունները ուղիղ համեմատական են: Այդ դեպքում ուղիղ համեմատականության գործակիցն է՝
- 1) $\frac{1}{5}$
 - 2) 5
 - 3) $\frac{16}{5}$
 - 4) $\frac{5}{16}$
6. Հայտնի է, որ 200 լամպից 10-ը խոտան են լինում: Խոտան լամպ գնելու հավանականությունն է՝
- 1) 20
 - 2) 190
 - 3) $\frac{1}{20}$
 - 4) $\frac{1}{190}$

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում

- | | |
|-------------------------------------|-------------------|
| 7. Համեմատություն | Անհայտ թիվ |
| 1) $y:32 = 225:45$ | Ա) 160 |
| 2) $\frac{76}{25a} = \frac{38}{65}$ | Բ) $\frac{26}{5}$ |
| | Գ) 130 |
| | Դ) 64 |

Պատ՝ 1) _____, 2) _____

8 -15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

8. Քարտեզի վրա հատվածն ունի 8 սմ, իսկ իրականում 1400 կմ է: Քարտեզի մասշտաբն է՝
- 1) 1:175000
 - 2) 1:17500000
 - 3) 1:1750
 - 4) 1:1750000
9. $\frac{9}{100} : 3 = 18 : 600$ համեմատության եզրային անդամների արտադրյալն է՝
- 1) 1800
 - 2) $\frac{9}{100}$
 - 3) 54
 - 4) $\frac{27}{100}$
10. 60 կգ զանգված ունեցող աղի լուծույթում աղի զանգվածը հարաբերում է ջրի զանգվածին ինչպես 7:8: Որոշել աղի զանգվածը:
- 1) 32 կգ
 - 2) 28 կգ
 - 3) 30 կգ
 - 4) 20 կգ
11. 120 կգ տանձը չորացնելիս կորցնում է իր զանգվածի 85%-ը: Այդ դեպքում տանձի չիր կստացվի՝
- 1) 102 կգ
 - 2) 18 կգ
 - 3) 35 կգ
 - 4) 20 կգ

19. 210 կգ արևածաղկի սերմից ստացվում է 140 կգ յուղ: Որքա՞ն յուղ կստացվի 300 կգ արևածաղկի սերմից:

Պատասխան _____

20. 8 բանվոր որոշ աշխատանք կարող են կատարել 25 օրում: Քանի՞ օրում այդ նույն աշխատանքը կարող են կատարել 10 բանվոր:

Պատասխան _____

21. Մի գծագրում կան 8 չհատվող եռանկյուններ և քառանկյուններ: Նրանք ունեն ընդամենը 26 կողմ: Քանի՞ եռանկյուն և քառանկյուն կա գծագրում:

Պատասխան _____

*22-րդ խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել
առաջադրանքից հետո հատկացված տեղում*

Շոգենավը գետի հոսանքի ուղղությամբ 256 կմ-ն անցել է 8 ժամում: Որքա՞ն է շոգենավի արագությունը չհոսող ջրում, եթե լաստը այդ նույն ճանապարհը անցնում է 64 ժամում:

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բայանոց սանդղակով	

Ստուգող՝ _____
Ա.Ա.Հ.

ստորագրությունը